ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան **“01” փետրվարի** 2011 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 06-Ա/Ք

«ԱՐՑԱԽԻ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - 2011» ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001թ. նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշումը և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի հունվարի 27-ի N 63-Ա/Ք հրամանը, ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում անցկացվող «Արցախի գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր – 2011» մրցույթը պատշաճ կազմակերպելու համար

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին (պետ Գ. Մելիքսեթյան)՝ եռօրյա ժամկետում ապահովել մրցույթի հայտարարության հրապարակումը զանգվածային լրատվության միջոցներով (հանրապետական մամուլ) և հրավերի փաթեթի տեղադրումը ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի ինտերնետային կայք:

2. ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ Տ. Գալստյան)՝ ապահովել հայտերի գիտական փորձաքննությունն

իրականացնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանված կարգով տրամադրումը:

3. ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչությանը (պետ Լ. Մարդոյան)՝

1) 30 օրացուցային օրվա ընթացքում ապահովել մրցույթի հայտերի ընդունումը և հաշվառումը,
2) մրցույթի հայտ ներկայացրած գիտահետազոտական խմբերի ղեկավարների համար իրականացնել տեղեկատվական խորհրդատվություն,
3) 5 աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպել հայտերի տեխնիկական ստուգումը և դրանց տրամադրումը փորձագիտական մասնագիտական խորհրդին,
4) 30 օրացուցային օրվա ընթացքում ապահովել մրցույթի հայտերի գիտական փորձաքննության կազմակերպումը,
5) 5 աշխատանքային օրվա ընթացքում ամփոփել գիտական փորձաքննության արդյունքները, դրանք ներկայացնել փորձագիտական մասնագիտական խորհրդին,
6) 10 աշխատանքային օրվա ընթացքում մրցույթի արդյունքների վերաբերյալ սահմանված կարգով տեղեկացնել գիտական թեմաների ղեկավարներին,
7) մինչև 2011թ. ապրիլի 29-ը կազմակերպել գիտական թեմաների ղեկավարների հետ պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման պայմանագրերի կնքումը:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ